

## **СРЕДНЕСРОЧНЫЕ ПРОГРАММЫ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ: О СРЕДНЕСРОЧНОЙ ПРОГРАММЕ ГОСУДАРСТВЕННЫХ РАСХОДОВ РА ЗА 2012-2014 ГГ.**

**C. Г. Амирханян  
Н. Г. Оганян**

Статья посвящена пояснению среднесрочной программы государственных расходов за 2012-2014 гг. РА и выяснению роли и назначения среднесрочных программ государственных расходов в государственной политике. Представлены прогнозы Министерства финансов и Центрального банка РА по развитию экономики Армении в течение 2012-2014 гг. в качестве основных макроэкономических индексов. В статье подчеркнуты именно прогнозы о доходах, расходах и величин дефицита в государственных бюджетах за указанные годы.

## **MEDIUM-TERM EXPENDITURE FRAMEWORKS. ABOUT THE 2012-2014 MEDIUM-TERM EXPENDITURE FRAMEWORK OF RA**

**S. G. Amirkhanyan  
N. H. Ohanyan**

This article is devoted to the explanation of 2012-2014 Medium-Term Public Expenditure Framework and generally to the clarifying the role and the significance of medium-term public expenditure frameworks in state policy. The forecasts performed by Ministry of Finance and Central Bank of RA about developing the economy of Armenia during 2012-2014 are introduced here, that are presented in the form of the basic macroeconomical indexes. The article also underlines the prevision revenues, expenditure and the measure of deficit of the government budgets during those years.

## **ԲԱՆԿԱՅԻՆ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ**

**Մ. Ն. ՋԵՂՋԱՅԱՆ  
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
Ա. Մ. ՍԱՆՈՒԿՅԱՆ  
ԳՊՀ մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող**

Շուկայական տնտեսության պայմաններում բանկային գործունեության կազմարման գործընթացում կարևորվում է ռիսկերի կառավարումը: Ռիսկի կառավարումը բանկային գործունեության ռազմավարության մշակման և իրականացման գործընթաց է, որն հանդիսանում է առևտուրային բանկերի կառավարման, նպատակներին հասնելու համար իրատեսական պլանների մշակման բաղկացուցիչ մաս: Հայաստանի Հանրապետությունում բանկերն իրենց գործունեության ընթացքում բախվում են բազմատեսակ ռիսկերի հետ, որոնց նկատմամբ

անհրաժեշտ ուշադրության բացակայությունը բանկերին պատճառում է ֆինանսական գգայի կորուստներ՝ դառնալով սնամկացման պատճառ: Բանկային գործունեության առանձնահատկությունն այն է, որ շահույթի ստացման գործում ռիսկի դերն առավել ցայտուն է, քանի որ բանկերը հաճախ իրենց գործառույթներն իրականացնում են անորոշության, տեղեկատվության անհամաչափության պայմաններում և ստիպված են իրենց վրա վերցնել ռիսկի այս կամ այն բաժինը:

Բանկերի գործունեության վերջնական նպատակը սեփական և ներգրավված միջոցների տեղաբաշխմանք առավելագույն շահույթի ստացումն է՝ պահպանելով սահմանված կանխարգելիչ նորմատիվների պահանջները: Ցանկացած ֆինանսական կամ բանկային գործունեություն ունի որոշակի ռիսկային ռիսկայնություն, քանի որ այս պարագայում մեծանում է կորուստներ կրելու հավանականությունը և անհրաժեշտություն է առաջանում՝ իրականացնելու հաջողությանը միտված գործողություններ, որոնք կունենան բարենպաստ պարագայում մերդրված գումարները կորցնելու հավանականությունն է: Եթևարար, ռիսկն այն պոտենցիալ հնարավորությունն է, երբ ակնկալվող և չնախատեսված դեպքերը կարող են բացասական ազդեցություն ունենալ հաստատության կապիտալի և շահույթի վրա: Ռիսկը որոշումների կայացման ընթացքում առկա այնպիսի զարգացումների հավանականությունն է, որը կարող է բացասարար անդրադառնալ տնտեսավարող սուբյեկտի շահույթի, կապիտալի, հետևարար՝ ամբողջ գործունեության վրա՝ հանգեցնելով կորուստների: Ցանկային գործունեության խելամիտ կառավարումը նախատեսում է հնարավոր կորուստների կառավարում, իսկ շահույթ ստանալը հանդիսանում է հիմնավորված և հուսալի վճիռների կայացման արդյունք: Այս պարագայում բանկի դեկավարությունը պետք է սահմանի վճիռների կայացման այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան՝ ստանալով բավարար տեղեկատվություն բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը կանխատեսելու, գնահատելու և կառավարելու համար, նվազեցնել դրանց ազդեցությունը բանկի գործունեության վրա:

Ցուրաքանչյուր բանկի արդյունավետ կառավարման և կայունության ապահովման տեսակետից կարևոր է, որ բանկի դեկավարները կարողանան գնահատել ստանձնած ռիսկերը, դրա հետևանքով կրած կամ ակնկալվող վնասները՝ դրանք համադրելով սպասվելիք եկանուտների հետ: Այս պարագայում բանկի նպատակը բաժնետերերի ներդրման արժեքն առավելագույնի հասցնելն է, և բանկը պետք է զգտի ապահովել եկանուտերության առավելագույն մակարդակ՝ ստանձնելով բաժնետերերի կողմից ընդունելի ռիսկի առավելագույն մակարդակ: Այս առումով անհրաժեշտ է իրականացնել բանկի կողմից ստանձնած ռիսկերի և ստացված եկանուտների վերլուծություն, փորձել գտնել ռիսկերի և եկանուտների միջև օպտիմալ հարաբերակցությունը, որը հնարավորություն կտա ապահովելու եկանուտաբերության առավելագույն մակարդակ:

Ցանկային գործունեության առանձնահատկությունը կայանում է նաև նրանում, որ բանկն անհրաժեշտ վարկային ռեսուրսներ ստեղծելու համար ստիպված է հավաքագրել փոխառու միջոցներ: Որպեսզի նա կարողանա իրականաց-

ԱԵԼ գործառնություններ և ստանալ շահույթ, պետք է վայելի հասարակության ազատ դրամական միջոցներ ունեցող անդամների վստահությունը, որի հիմքում ընկած են այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են հոսալիության բարձր աստիճանը և կայունությունը: Այս հանգամանքները բանկին ստիպում են առաջադրելու և լուծելու նաև ռիսկի կառավարման խնդիրը:

Անհրաժեշտ է նշել, որ բանկային ռիսկի կառավարումը հնարավոր չէ իրականացնել առանց բանկի գործունեության արտաքին ու ներքին միջավայրերի համայիր հետազոտության, վերլուծության, ռազմավարության ընտրության, ժամանակի գործոնի հաշվառման: Բանկային գործունեությանը հատուկ ռիսկերի կառավարումը տնտեսագիտական գրականության մեջ հայտնի է «ռիսկ-մենեքմենթ» անվանումով: Դրա հիմքում ընկած է աշխատանքի այնպիսի կազմակերպումը, որի արդյունքում պետք է կրծատվի ռիսկի աստիճանը, և տնտեսության անորոշության պայմաններում ապահովվի ցանկալի շահույթի ստացումը:

Ռիսկ-մենեքմենթի կազմակերպման գործընթացը ներառում է.

- ռիսկի նպատակի և կապիտալի ռիսկային ներդրումների որոշումների կայացում,
- շրջակա տնտեսական միջավայրի մասին տեղեկատվության հավաքագրում,
- ռիսկի ազդեցությանը պայմանավորված արդյունքների արժեքի գնահատում,
- կապիտալի ռիսկային ներդրումների տարբերակների մշակում և լավագույնի ընտրություն,
- ռիսկի կառավարման ռազմավարության և մարտավարության մեթոդների, ռիսկի աստիճանի իջեցման եղանակների ընտրություն:

Վերոնշյալ գործընթացների ճիշտ կազմակերպման միջոցով զգալի հաջողությունների կարելի է հասնել տնտեսական խնդիրների լուծմանը համապատասխան մեթոդներին տիրապետելու դեպքում, առավել ևս երբ ռազմավարության մեջ կիրառվում են հետևյալ սկզբունքները.

- ձգտել առավելագույն շահույթի, կապիտալի կիրառման կամ տվյալ գործարքի իրականացման բոլոր հնարավոր տարբերակներից ընդունելի ռիսկի պայմանով ընտրել առավելագույն շահույթ խոստացող տարբերակը,
- պայմաններ ապահովել առավելագույն շահույթի ստացման լավագույն հնարավորության իրականացման համար:

Այս պարագայում կարևոր նշանակություն ունի տվյալ պայմաններում հուսալի և բավարար տեղեկատվության առկայությունը, քանզի այն թույլ է տալիս ընդունելու գործունեության ճիշտ որոշում: Նման տեղեկատվությունը տվյալներ է պարունակում այս կամ այն ռիսկային իրավիճակի, մոցավիցների ֆինանսական կայունության, պայմանագրության և այլ պայմանների մասին:

Միջազգային փորձն առաջադրում է ռիսկ-մենեքմենթի հետևյալ կանոնները.

- չի կարելի դիմել սեփական կապիտալից ավելի մեծ ռիսկի,
- անպայման պետք է նկատի ունենալ ռիսկի հետևանքները,
- չի կարելի ռիսկի ենթարկել մեծ արժեքներ՝ փոքր ստանալու համար,
- ռիսկի դիմելու դրական որոշում պետք է կայացնել կասկածների բացակայության պայմաններում,

- կասկածի առկայության դեպքում պետք է ընդունել բացասական որոշում,
- չպետք է կարծել, թե միշտ գոյություն ունի մեկ որոշում, քանի որ հնարավոր են այլ լուծումներ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ մինչև կապիտալի ռիսկային ներդրման որոշում ընդունելը անհրաժեշտ է հաշվարկել վնասի առավելագույն ծավալն ըստ տվյալ ռիսկի, ապա այն համեմատել ներդրվող կապիտալի մեջության ու բանկի ֆինանսական ռեսուրսների հետ, որպեսզի պարզվի, թե արդյոք սպառնու՞մ է սնանկացման կամ ողջ ունեցվածքը կորցնելու վտանգ:

### Աղյուսակ 1 Բանկային ռիսկերի տարրերի սկզբունքները

Տարրեր	Սկզբունքներ
Ռիսկի ճանաչում	<ul style="list-style-type: none"> <li>➤ ծավալում տեղեկատվություն ռեսուրսների մասին,</li> <li>➤ հանգամանալից տեղեկատվություն հնարավոր վնասների մասին:</li> </ul>
Ռիսկի գնահատում	<ul style="list-style-type: none"> <li>➤ տեղեկատվություն ռեսուրսների «արժեքի» մասին,</li> <li>➤ ընթացիկ ռիսկի գնահատում,</li> <li>➤ ապագա ռիսկերի և վնասների կանխատեսում:</li> </ul>
Ռիսկի հսկողություն	<ul style="list-style-type: none"> <li>➤ կազմակերպական նպատակների և ռիսկերի հսկողության համարում,</li> <li>➤ ռիսկերի և հնարավոր կամ իրական կորուստների կրծատման խթանների ստեղծում,</li> <li>➤ ռիսկերի հսկողության տարրեր ծրագրերի արդյունավետության շարունակական մոնիթորինգի ապահովում:</li> </ul>
Ռիսկի ֆինանսավորում	<ul style="list-style-type: none"> <li>➤ ռիսկի ֆինանսավորման լայնանասշտար նոտեցումների կիրառում՝ առկա բոլոր ֆինանսական ռեսուրսների օգտագործմանը,</li> <li>➤ համապատասխան ֆինանսական պաշտպանության ապահովում «աղետներից»,</li> <li>➤ ֆինանսական ռիսկերի ծախսների բաշխում:</li> </ul>
Մեփական ռիսկերի կառավարում	<ul style="list-style-type: none"> <li>➤ համաձայնագրի բոլոր օղակների կառավարիչների գործողությունների պատասխանատվության նախատեսման վերաբերյալ:</li> </ul>
	<ul style="list-style-type: none"> <li>➤ ռիսկերի կառավարման հստակ կառուցվածք,</li> <li>➤ անենայնա հստակ նպատակների սահմանում,</li> <li>➤ կառավարման բոլոր շահագրգիռ նակարդակների խորհրդակցություն:</li> </ul>

Բանկային ռիսկերի կառավարման շրջանակներում ձևավորվել են բանկային ռիսկերի կառավարման որոշակի տարրեր /աղյուսակ 1/, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է որոշակի սկզբունքներով:

## **ՈՒՍԿԻ ԾԱՆԱՑՈՒՄ**

Բանկային ռիսկերի կառավարման սկզբունքներին համապատասխան՝ ռիսկերի նույնականացման գործնթացը հաջողությամբ կատարելու նպատակով ֆինանսական գործակալը պետք է ունենա ամբողջական տեղեկատվություն տնօրինվող ռեսուրսների և հնարավոր վճարների մասին: Ընդ որում՝ բանկի ռեսուրսները կարելի է ներկայացնել հետևյալ խնդերով:

● **Նյութական ռեսուրսներում ընդգրկված են շենքերն ու կառույցները, տրանսպորտը, երթեմն նաև՝ գեղարվեստի գործերը և այլն: Այն դեպքերում, եթե բանկն իրականացնում է լիզինգային գործառնություններ, նյութական ռեսուրսներ են համարվում նաև լիզինգային պայմանագրի մեջ նշված միջոցները: Նյութական ռեսուրսների ցանկի որոշման ժամանակ առանցքային հատկանիշ է ուղղակի տնօրինման հետևանքով առաջացած ֆինանսական պատասխանատվությունը /գնում, ետքնան իրավունքի բացակայություն/, ինչպես նաև լիզինգային պայմանագրում նախատեսված, իրավաբանական ուժ ունեցող պատասխանատվության անփիսի ձև, ինչպիսին է, օրինակ՝ սեփականության իրավունքի փոխանցման պայմանագիրը (տրաստ):**

● **Մարդկային ռեսուրսներ են բանկի աշխատակիցները, բանկի մշտական այցելուները, բանկին ծառայություններ մատուցողները, որոնց նկատմամբ որոշակի հետաքրքրություն ունեն նաև ֆինանսական միջնորդները:**

● **Ֆինանսական ռեսուրսները գոյանում են բանկի կապիտալից, ավանդներից, արժեքություններից, թանկարժեք մետաղներից և այլն, որոնք հաշվարկվում են դրանց գոյացման աղբյուրներին համապատասխան (մշտական այցելուներ, արժեթղթերի սեփականատերեր, գործակալներ և այլն):**

● **Ոչ նյութական կամ անշոշափելի ռեսուրսներ են հեռահաղորդակցական ծառայությունները, անվտանգության համակարգերը, դեկավար անձնակազմի և մյուս աշխատողների բարեխղճությունը, բանկում գաղտնապահության մակարդակը և այլն:**

Բնական ռեսուրս է, օրինակ, հողը:

Հնարավոր կորուստների (վճարների) ռիսկը կարելի է դասակարգել հետևյալ կերպ:

● **Ուղղակի կորուստները գոյանում են բոլոր հնարավոր ֆիզիկական բնույթի վճարներից և կարող են հանգեցնել բանկային ռեսուրսների մասնակի կամ լրիվ ոչնչացման (հրդեհ, պայթյուն, փոխադրման ռիսկ, երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ, ահաբեկչություն և այլն):**

● **Անուղղակի կորուստներ են եկամտի կորուստները, բանկային գործառնությունների հետ կապված լրացուցիչ ծախսերը և այլն:**

● **Երրորդ անձի պարտավորությունների հետ կապված կորուստներ են քաղաքացիների կողմից կանխամտածված և չկանխամտածված իրավական խախտումները, պայմանագրային պարտավորությունների խախտումները և այլն:**

● **Սպեկուլյատիվ կորուստներն առաջանում են՝ կապված ֆինանսական ռիսկերի հետ /վարկային, տոկոսային, չհաշվեկշռված իրացվելիության ռիսկեր/:**

● **Շուկայական կորուստները ծագում են, եթե բանկը ստիպված է լինում վաճառել իր ակտիվները խիստ ցածր գնով:**

## **Ռիսկի գնահատում**

Ռիսկերի նվազեցման մոտեցումները որոշելու նպատակով բանկերում կատարվում է ռիսկերի գնահատում: Այս պարագայում որոշվում է ռեսուրսների հիմնական խմբերի ոչ միայն հաշվեկշռային, այլև դրանց շուկայական արժեքը: Այն դեպքում, եթե ֆինանսական միջնորդը ստանում է տեղեկություններ իր ռեսուրսների արժեքի մասին, նա կարող է չափել նաև «ընթացիկ» ռիսկը: Այս փուլում անհրաժեշտ է կատարել հնարավոր կորուստների ոչ միայն քանակական ու որակական վերլուծություն, այլև անհրաժեշտություն է առաջանում ունենալ տեղեկատվություն անցյալում բանկի կրած կորուստների մասին: Կորուստների որակական վերլուծությունը ենթադրում է հաշվարկ կատարել հետևյալ ցուցանիշների գծով:

- կանխատեսման ենթակա առավելագույն կորուստներ բանկը կարող է կրել, եթե իրադարձությունները ծավալվեն ամենավտանգավոր ուղղություններով, և չգործի անվտանգության ապահովման համակարգը,

- հնարավոր առավելագույն կորուստներ բանկը կարող է ունենալ այն դեպքում, եթե կորուստներն ինչ-որ չափով չերահսկվեն անվտանգության ապահովման և փոխհատուցման համակարգի կողմից:

Կորուստների քանակական վերլուծությունը վիճակագրական տվյալների հավաքագրումն ու մշակումն է, որի դեպքում իրականացվում են հետևյալ գործնքացները՝

- կորուստների մասին տվյալների բազայի ստեղծում՝ դրանց առաջացման պայմանների նկարագրմամբ,

- բանկի կորուստների պատմության (հնգամյա կամ ավելի) շարադրում՝ դրանց լրիվ նկարագրությամբ,

- կորուստների դասակարգում՝ ըստ առաջացման պատճառների,

- հաշվետվություններում չարձանագրված կորուստների բացահայտում, որոշում ու հաշվարկում,

- վիճակագրության հավաքագրած տվյալների հիման վրա կորուստների հիմնական միտումների որոշում,

- բանկային գործունեության հեռանկարային կորուստների կանխատեսում:

Ռիսկերի գնահատման հարցում կարևորվում է բանկային վերլուծության համակարգի ընտրությունը: Այս ոլորտի փորձագետները հետազոտման առավել ճշգրիտ արդյունքներ ստանալու նպատակով հնարավորություն ունեն կիրառելու ռիսկերի գնահատման զանազան առաջադիմ մեթոդներ կամ զուգակցելու որոշ մեթոդներ: Ընդ որում՝ վերլուծության մեթոդն ընտրելիս անհրաժեշտ է ծանոթանալ ոլորտում առկա նորույթին, տեղյակ լինել ռիսկերի գնահատման համաշխարհային պրակտիկայի նորագույն մեթոդներին, որոնք թույլ կտան մշակել ռիսկերի արդյունավետության աստիճանի գնահատման չափորոշիչներ և դրանց հիման վրա իրականացնել մշտական մոնիթորինգ:

## **Ռիսկի հսկողություն**

Ֆինանսական գործակալների նպատակների համաձայնեցման, ռիսկի մակարդակի հսկողության նպատակով անհրաժեշտ է ենթակառուցվածքների աշխատողների կազմից ստեղծել շահագրգիռ հանձնախումբ: Ուսումնասիրությունները վկայում են, որ ռիսկերի հսկողության ծրագրերում բանկերից շատե-

ըս դրանց արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կարևորում են հետևյալ դրույթները.

- բանկի պաշտպանության և ապահովության հարցերի առաջադրում,
- աշխատակազմի և այցելումների անվտանգության ապահովում /դժբախտ դեպքեր, պատանդ վերցնել, հափշտակումներ/,
- սեփականության պահպանություն,
- տեղեկատվության մշակման գործընթացների և գործառնական կենտրոնի հսկողություն՝ ապահովելով աշխատանքների գաղտնիությունը և անսխալությունը,
- ներքին և արտաքին հանցագործություններից հնարավոր կորուստների բացահայտում և կանխարգելում,
- պայմանագրերով և համաձայնագրերով նախատեսված պարտավորությունների կատարման հսկողություն, որի համար կարևորվում է իրավաբանական խորհրդատվության և մոնիթորինգի պարբերական անցկացումը,
- ճգնաժամային իրավիճակներից դուրս գալու նպատակով միջոցառումների մշակում,
- այլ ռիսկերի հսկողություն:

Բանկերի գործունեության կառավարման հետ կապված՝ անհրաժեշտ է ստեղծել ռիսկի և ծախսերի կրծատմանն ուղղված տուգանքներ և վարձատրման խթաններ, որոնք հիմնված կլինեն վճարման փոխհատուցման հնարավոր և իրական ծախսերի մասին տեղեկատվության վրա:

#### **Ռիսկի ֆինանսավորում և ապահովագրություն**

Ռիսկերի կառավարման ֆինանսավորման տարրի հիմնական նպատակը վճարման դեպքում դրանց փոխհատուցման պահուստների ստեղծումն է: Ըստ որում՝ ռիսկի ֆինանսավորման բանկային ծրագիրն անհրաժեշտ է կազմել այն հաշվով, որ տարիների կտրվածքով մեծ կորուստների փոխհատուցման համախառն ուղղակի ծախսերն աստիճանաբար նվազեն: Այդ նպատակով անհրաժեշտ է՝

- ռիսկի մակարդակը պահել բանկի ֆինանսական հնարավորությունների սահմաններում,
- օգտագործել ռիսկի ֆինանսավորման արտաքին աղբյուրները,
- ապահովել բանկային ռիսկերի երկարաժամկետ ծախսերի առավելագույն կայունություն:

Բանկը կորուստներից պահպանելու նպատակով պետք է կիրառվի ռիսկի զսպման քաղաքականություն, որոշվի կորուստներից ինքնապահովագրման սեփական «շեմ»՝ մակարդակ: Ռիսկի մակարդակը որոշելու նպատակով անհրաժեշտ է նկատի ունենալ այնպիսի գործուների համակցում, ինչպիսիք են բանկի եկամտաբերությունը, բաժնետիրական կապիտալի չափերը, սեփական փոխառու միջոցների հարաբերությունը, բանկի պարտքերի մարման հնարավորության աստիճանը, դեկավարության ռիսկի դիմելու պատրաստակամությունը, «բնական» համարվող կորուստների մեծությունը: Այս պարագայում բանկը պետք է քննարկի ռիսկի ֆինանսավորման ներքին աղբյուրները՝ որոշված «շեմի» սահմաններում: Ներքին աղբյուրներ են պահուստների ստեղծումը, դրամի առկա հոսքի շարժի ուղղությունների փոփոխությունը, վճարման պահու-

մը: Եթե պարզվի, որ ներքին աղբյուրները չեն բավարարում իրական պահանջ-ներին, անհրաժեշտություն է առաջանում օգտագործելու ֆինանսավորման այլ արտաքին աղբյուրներ: Արտաքին աղբյուրներ են ապահովագրությունը, վարկային գծերի բացման հնարավորությունը և փոխառությունների օգտագործումը: Ընդ որում՝ բանկային գործունեության ապահովագրության կարևոր ձևերի ցանկը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ:

- բանկերի երաշխիքների կամ լրիվ պարտքային պարտավորությունների ապահովագրություն,
- համակարգչային հանցագործության դեպքերի ապահովագրում,
- ավանդների գծով պատասխանատվության ապահովագրում,
- ռիսկի բոլոր ձևերից սեփականության ապահովագրում,
- բարձր և միջին օղակների դեկավարների պատասխանատվության ապահովում և այլն:

Այսպիսով, բանկային գործունեության բնագավառում կարևոր ոչ միայն ռիսկից ընդհանրապես խուսափելն է, այլ ռիսկի հետևանքների կանխատեսումն ու դրանց արդյունքները նվազագույնի հասցնելը: Բանկային գործունեության կառավարման գործընթացում կարևորվում է ռիսկերի կառավարման մեթոդների կատարելագործումը: Բանկային ռիսկերի արդյունավետ կառավարման համար մեծ նշանակություն ունի ռիսկերի առաջացման պատճառների բացահայտումը, քանզի դրանք կարող են պայմանավորված լինել ինչպես արտաքին միջավայրի փոփոխություններով, այնպես էլ ներքին գործուներով: Բանկային գործունեության ադյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել բանկային ռիսկերի կառավարման այնպիսի սկզբունքներով. որոնք հնարավորություն կտան կանխատեսել, գնահատել և կառավարել բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերը՝ նվազեցնելով դրանց ազդեցությունը բանկի գործունեության վրա:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ասատրյան Բ.,** «Բանկային գործ», ուսումնական ձեռնարկ, Երևան, 2004:
2. **Ասրյան Գ.,** «Բանկի կառավարման հիմունքները», Երևան, 2003:
3. **Քարանյան Ծ.,** «Բանկային գործի հիմունքները», Երևան, 2003:
4. **Քաղանյան Լ.Յ.,** «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», Երևան, 2007:
5. **Միմոնյան Ա.Դ.,** «Ռիսկի տնտեսական հասկացությունը և դրա դերը բանկային գործում», Երևան, 2007:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԻՆՏԵՐՆԵՏԱՅԻՆ ԿԱՅՔԵՐ

[www.cba.am](http://www.cba.am)  
[www.armbusinessbank.am](http://www.armbusinessbank.am)

Հայաստանի Կենտրոնական բանկ  
Հայրիզնեսբանկ ՓԲԸ

## **УПРАВЛЕНИЕ БАНКОВСКИМИ РИСКАМИ КАК ЗАЛОГ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БАНКОВСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**

*M. N. Ергнян  
A. M. Манукян*

В условиях рыночной экономики в процессе управления банковской деятельностью важной задачей является совершенствование методов управления рисками. Для эффективного управления банковскими рисками существенное значение имеет выявление причин возникновения рисков, так как они могут быть обусловлены как изменениями внешней среды, так и внутренними факторами.

С целью повышения эффективности банковской деятельности нужно руководствоваться такими принципами управления банковскими рисками, которые позволяют прогнозировать, оценить и управлять ими, уменьшив их влияние на деятельность банков.

## **CONTROLLING BANKING RISKS AS GUARANTEE FOR EFFECTIVENESS OF BANKING ACTIVITIES**

*M. N. Hergnyan  
A. M. Manukyan*

Within the conditions of market economics and the controlling process of banking activities, the improvement of methods for controlling banking risks is considered to be an important task. In order to effectively control banking risks, one should find out the reasons arising these risks as they may be conditioned by external environment and internal factors, as well.

With the aim of improving the efficiency of banking activities, one should work in accordance with such principles of controlling banking risks which give opportunities for forecasting, evaluating and controlling these risks, and decreasing their influence on the activities of the banks.

## **ՅԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՏՎԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՅԱՅԱՍԱՆԻ ՅԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ճՅՈՒՂԵՐԻ**

*Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
ԳՊՀ դասախոս*

Ժամանակակից տնտեսական հարաբերությունների համատեքստում տնտեսական ակտիվության ապահովման կարևոր նախապայմանը հիմնավորված հարկային բեռի սահմանումն է: Անհրաժեշտ է հարկային բեռի այնպիսի մակարդակի սահմանում, որն առավելագույնս կապահովի պետական բյուջեն համապատասխան հարկային եկամուտներով և միաժամանակ կնպաստի երկրում տնտեսական ակտիվության բարձրացմանը: Յայաստանի Յանրապետությունում